# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բերդիկ, (055) 58-22-66, berdik.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 25

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 8 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջով

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել համայնքի ավագանու թիվ 8 նիստի օրակարգը հետևյալ հերթականությամբ.

1. Համայնքի 2016 թվականի բյուջեի հաստատման մասին :
2. Համայնքի ղեկավարի վարձատրության չափը 2016 թվականի համար սահմանելու մասին:
3. Համայնքի ավագանու 2014թ-ի նոյեմբերի 26-ի թիվ 25-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը 2016 թվականի համար հաստատելու մասին:
4. Համայնքի սեփականություն համարվող գույքի ամենամյա գույքագրման արդյունքները գնահատելու մասին:
5. Համայնքի քաղաքաշինության կանոնադրությունը հաստատելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ (կողմ)
2. ԴԱՎԹՅԱՆ ԼԱԵՐՏ (կողմ)
3. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ ԿԱՌԼԵՆ (կողմ)
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՈՒՍԻԿ (կողմ)
5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀՐԱՉՅԱ (կողմ)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԲԵՐՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բերդիկ, (055) 58-22-66, berdik.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 26-Ն

### ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջով

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝**

Հաստատել համայնքի 2016 թվականի տարեկան բյուջեն՝ համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ (կողմ)
2. ԴԱՎԹՅԱՆ ԼԱԵՐՏ (կողմ)
3. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ ԿԱՌԼԵՆ (կողմ)
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՈՒՍԻԿ (կողմ)
5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀՐԱՉՅԱ (կողմ)

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԲԵՐՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ Արարատի մարզի
Բերդիկ համայնքի ավագանու
2015 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 26-Ն որոշման

# ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ

## *ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ*

Վարչական բյուջեի եկամուտները ընդամենը ՝ 20762.2 հազ. դրամ ,
*1 . Հարկային եկամուտներ ՝ 4330.0 հազ. դրամ ,*
այդ թվում ՝
ա. հողի հարկ՝ 2500.0 հազ. դրամ ,
այդ թվում ՝
ֆիզիկական անձանցից ՝ 2500.0 հազ. դրամ ,
բ. գույքահարկ շենք շինություններից ՝ 70.0 հազ. դրամ ,
այդ թվում ՝
ֆիզիկական անձանցից ՝ 70.0 հազ. դրամ,
գ. գույքահարկ փոխադրամիջոցներից ՝ 1700.0 հազ. դրամ,
դ . տեղական տուրքեր ՝ 60.0 հազ. դրամ ,
այդ թվում ՝
ոգելից խմիչքի վաճառքի թույլտվություն ՝ 30.0 հազ. դրամ ,
ծխախոտի վաճառքի թույլտվություն ՝ 30.0 հազ. դրամ ,
*2. Ոչ հարկային եկամուտներ ՝ 772.5 հազ. դրամ ,*
այդ թվում ՝
վարձակալական հողերի վարձավճար ՝ 772.5 հազ. դրամ ,
*3. Պաշտոնական ընթացիկ տրանսֆերտներ ՝ 15659.7 հազ. դրամ ,*
այդ թվում ՝
դոտացիա ՝ 15659.7 հազ. դրամ ,

## *ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ*

4111 – 10034.4 հազ. դրամ – աշխատավարձ ,
4212 – 900.0 հազ. դրամ – էներգետիկ ծառայություններ
որից ՝ 600.0 հազ. դրամ – վարչական շենքի և փողոցների լուսավորման համար էլեկտրաէներգիայի վարձավճար ,
300.0 հազ. դրամ –վարչական շենքի ջեռուցման համար դիզ.վառելիքի ձեռքբերում ,
4213 – 1000.0 հազ. դրամ – կոմունալ ծառայություններ ,
4214 – 120.0 հազ. դրամ – ինտերնետային կապի ծառայություն ,
4215 – 33.0 հազ. դրամ – ծառայողական մեքենայի ապահովագրական ծախսեր ,

4232 -  100.0 հազ. դրամ – համակարգչային ծառայություններ ,
4234 - 100.0 հազ. դրամ – թերթերի բաժանորդագրություն ,
4251 - 980.0 հազ. դրամ – փողոցների խճապատում ,
4261- 500.0 հազ. դրամ – գրասենյակային պիտույքների ձեռքբերում ,
4264 – 1 000.0 հազ. դրամ –տրանսպորտային նյութեր ,
որից՝ 600.0 հազ. դրամ - ծառ. մեքենայի վառելիքի /գազ/ ձեռքբերում ,
400.0 հազ. դրամ – ավտոպահեստամասերի, յուղի,անտիֆրիզի ձեռքբերում,
4269 – 473.8 հազ. դրամ – այլ նպատակային նյութեր՝միջոցառումների համար ,
4637- 400.0 հազ. դրամ  - ֆինանսական աջակցություն դպրոցին ,
4726 - 400.0 հազ. դրամ  – հուղարկավորությունների ծախսեր ,
4729 – 2400.0 հազ. դրամ  – այլ նպաստներ բյուջեից ,
որից ՝ 200.0 հազ. դրամ – հիվանդներին ,
200.0 հազ. դրամ – ազատամարտիկներին ,
2000.0 հազ. դրամ – անապահով ընտանիքներին ,
4819 – 110.0 հազ. դրամ – նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպությ,
որից ՝ 100.0 հազ. դրամ – Արարատ հիմնադրամին ,
10.0 հազ. դրամ – Օլիմպիկ հիմնադրամին ,
4823 – 11.0 հազ. դրամ – ծառայողական մեքենայի տեխզննություն ,
4891 – 2200.0 հազ. դրամ - պահուստային ֆոնդ ,

ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ԶԱՐՈՒՀԻ ՂԱԶԱՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Բերդիկ, (055) 58-22-66, berdik.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 27-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝**

Համայնքի ղեկավարի վարձատրության չափը 2016 թվականի համար սահմանել 180 000 /մեկ հարյուր ութանասուն հազար/ դրամ :

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ (կողմ)
2. ԴԱՎԹՅԱՆ ԼԱԵՐՏ (կողմ)
3. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ ԿԱՌԼԵՆ (կողմ)
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՈՒՍԻԿ (կողմ)
5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀՐԱՉՅԱ (կողմ)

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱԼԲԵՐՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բերդիկ, (055) 58-22-66, berdik.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 28-Ն

## ԲԵՐԴԻԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2016Թ-Ի ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014Թ-Ի ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 25-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի , 32-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի , <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի պահանջներով

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Բերդիկի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը 2016 թվականի համար՝ համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ (կողմ)
2. ԴԱՎԹՅԱՆ ԼԱԵՐՏ (կողմ)
3. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ ԿԱՌԼԵՆ (կողմ)
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՈՒՍԻԿ (կողմ)
5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀՐԱՉՅԱ (կողմ)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԲԵՐՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ Արարատի մարզի
Բերդիկ համայնքի ավագանու
2015 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 28-Ն որոշման

**ԲԵՐԴԻԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ**

1. Աշխատակիցների թվաքանակը ՝ 8 ,
2. Գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը ՝

| ***Հաստիքի անվանումը*** | ***Հաստիքային միավորը*** | ***Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/*** |
|---|---|---|
| *Հայեցողական պաշտոններ* | | |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 80.000 |
| *Համայնքային ծառայության պաշտոններ* | | |
| Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար / ծածկ. 1.2-1 / | 1 | 105.000 |
| Գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /ծածկ.3.1-1 / | 1 | 100.000 |
| Գյուղապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /ծածկ.3.2-1/ | 1 | 72.800 |
| *Քաղաքացիական աշխատողներ* | | |
| Գրադարանավար | 1 | 72.800 |
| *Տեխսպասարկող անձնակազմ* | | |
| Հարկահավաք | 1 | 72.800 |
| Հավաքարար | 1 | 72.800 |
| Վարորդ | 1 | 80.000 |
| ***Ընդամենը*** | **8** | **656.200** |

ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՝ ԶԱՐՈՒՀԻ ՂԱԶԱՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Բերդիկ, (055) 58-22-66, berdik.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 29

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջով

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝**

Հաստատել համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԼԱԵՐՏ
3. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ ԿԱՌԼԵՆ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՈՒՍԻԿ
5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀՐԱՉՅԱ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԲԵՐՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ
Բերդիկ համայնքի ավագանու
2015 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 29 որոշման

## ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱԿՏ

08.12.2014թ. գ. Բերդիկ

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման հանձնաժողովը ի դեմս նախագահ՝ գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Ա. Ղադիմյանի ,անդամներ՝ համայնքի ղեկավարի տեղակալ Ա. Խաչատրյանի , գյուղապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Ջ. Մուրադյանի , կազմեցինք սույն ակտն այն մասին , որ ս/թ նոյեմբերի 26-ից մինչև դեկտեմբերի 5-ը կատարեցինք համայնքին պատկանող գույքի ,կառույցների , շինությունների և առկա այլ ապրանքների ամենամյա գույքագրում՝

| Հ/Հ | Գույքի անվանումը | Քանակը /միավոր/ | Գումարը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| 1. | Ակումբի շենք | 1 | 7 817 730 |
| 2. | Զուգարանի շենք | 1 | 36 877 |
| 3. | Երկաթյա պահարան | 1 | 14 136 |
| 4. | Ջրավազան | 1 | 42 825 |
| 5. | Հեռուստացույց | 1 | 150 000 |
| 6. | Գազի խողովակաշար | 1 | 11 199 784 |
| 7. | Ավտոմեքենա Նիվա | 1 | 3 740 000 |
| 8 . | Ջահ | 2 | 30 000 |
| 9. | Օդորակիչ | 1 | 380 000 |
| 10. | Համակարգիչ | 1 | 320 000 |
| 11. | Համակարգիչ | 2 | նվիրատվություն |
| 12. | Տպիչ սարք | 1 | 150 000 |
| 13. | Տպիչ սարք | 1 | նվիրատվություն |
| 14. | Սկաներ | 1 | նվիրատվություն |
| 15. | UPS- 600 | 1 | 30 000 |
| 16. | UPS-AEG | 2 | նվիրատվություն |
| 17. | Գրասենյակային աթոռ | 6 | 72 000 |
| 18. | Զգեստապահարան | 1 | 103 000 |
| 19. | Համայնքի ղեկավարի աշխատանքային սեղան, դիմադիր և կողադիր սեղաններ,տումբա | 1 | 140 000 |
| 20. | Ավտոմեքենայի գազի փուչիկ | 1 | 140 000 |
| 21. | Ավտոմեքենայի հանակարգ | 1 | 360 00 |
| 22. | Համակարգչի սեղան | 3 | 165 000 |
| 23. | Գրասեղան | 2 | 90 000 |
| 24. | Աթոռ | 1 | 150 000 |
| 25. | Աթոռ | 10 | 140 000 |
| 26. | Գրապահարան | 1 | 170 000 |
| 27. | Շերտավարագույր | 40քմ | 120 000 |
| | ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | ***46միավոր և 40քմ*** | ***25 746 352*** |

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ղադիմյան

Անդամներ՝ Ա. Խաչատրյան

Ջ.Մուրադյան

ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ԶԱՐՈՒՀԻ ՂԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Բերդիկ, (055) 58-22-66, berdik.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 30-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 28-րդ կետի պահանջով

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝**

Հաստատել համայնքի քաղաքաշինության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի :

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԼԱԵՐՏ
3. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ ԿԱՌԼԵՆ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՈՒՍԻԿ
5. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀՐԱՉՅԱ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԲԵՐՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ Արարատի մարզի
Բերդիկ համայնքի ավագանու
2015 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 30-Ն որոշման

# ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ

Սույն կանոնադրությամբ սահմանվում են Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բերդիկ համայնքի տարածքում քաղաքաշինական գործունեության իրականացման առանձնահատկությունները՝ ելնելով համայնքի պատմականորեն ձևավորված ավանդույթների և պատմաճարտարապետական միջավայրի պահպանման անհրաժեշտությունից:

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը, որպես կանոն, մշակվում և հաստատվում է գոտևորման նախագծի կազմում՝ հավելվածի տեսքով:

1.2. Համայնքի ավագանու որոշմամբ քաղաքաշինական կանոնադրությունը կարող է մշակվել նաև մինչև գլխավոր հատակագծի և (կամ) գոտևորման նախագծի մշակումը՝ որպես առանձին փաստաթուղթ: Այս դեպքում կանոնադրությունը կցվում է նախագծային առաջադրանքին և պարտադիր հաշվի է առնվում համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի նախագծման ընթացքում:

1.3. Համայնքի ավագանու կողմից հաստատվելուց հետո քաղաքաշինական կանոնադրությամբ ամրագրված պայմանները ներառվում են համայնքի ղեկավարի կողմից կառուցապատողին տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքում՝ համապատասխան դրույթներ ամրագրելով առաջադրանքի ձևի «Լրացուցիչ պայմաններ» բաժնում:

## II. ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ
### (Ճարտարապետության առանձնահատկությունները և շինարարության տեխնոլոգիաները)

2.1. Համայնքի տարածքում գտնվող կարևոր շենքերի և շինությունների ճարտարապետական ոճի, կրկնվող և հաճախ կիրառվող տարրերի, ճակատների ձևավորման առանձնահատկությունների, օգտագործված շինանյութի և կառուցման եղանակի նկարագրությունը:

2.2. Նկարագրությունը հիմնավորվում է համապատասխան լուսանկարներով, գծագրերով:

## III. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

3.1. Համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների նկարագրությունը, դրանց ներկայիս վիճակը, վերականգնման ու պահպանման հետ կապված խնդիրները:

3.2. Տվյալները հիմնավորվում են պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակներով, համապատասխան լուսանկարներով:

## IV. ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԵՆՔԵՐ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Նկարագրվում են համայնքի տարածքում գտնվող համայնքի համար կարևոր նշանակություն ունեցող շենքերը և շինությունները, բերվում են դրանց հետ առնչվող պատմությունները, ներկայացվում են շենքերի և շինությունների ներկա վիճակը, վերականգնման և պահպանման հետ կապված խնդիրները:

4.2. Տվյալները հիմնավորվում են համապատասխան լուսանկարներով, գծագրերով:

## V. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԽՐԱԽՈՒՍՎՈՂ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՃԸ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ

5.1. Թվարկվում են այն ճարտարապետական ոճերը, հնարքները, դեկորատիվ տարրերը, ճակատների ձևավորման առանձնահատկությունները, դռների, պատուհանների համաչափությունները, շինարարական նյութերը և կառուցման եղանակը, որոնք պահպանվելու են համայնքի տարածքում և խրախուսվելու են նոր շենքերի կառուցման ժամանակ:

### 1. Շենքերի և շինությունների ծավալային ու ճարտարապետահատակագծային լուծումներին, ինչպես նաև դրանց առանձին մասերին ներկայացվող պահանջները

ա. շենքի մասշտաբը, ճակատային լուծումներն ու դրանք շեշտադրող տարրերը (զարդաքանդակները, շքամուտքը (պորտալը), որմնախորշերը, շվաքարանները, քիվերը, կամարները և այլն),
*ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի* ,

բ. շենքի ճակատային մասի արտաքին բացվածքների (դռներ, պատուհաններ, ցուցափեղկեր) ձևավորումը,
*ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի* ,

գ. շենքի տանիքներն ու շենքերի հորիզոնական հարթությունները («հինգերորդ ճակատ»), ինչպես նաև ճակտոնները (ֆրոնտոնները), մանսարդները, ձեղնանցքները, եզրապատերը (պարապետները) և այլն,
*ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի* ,

դ. շվաքարանները (տենտերը, մարկիզաները),
*ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի* ,

ե. շենքի ճակատների և տանիքի հարդարման նյութերն ու երանգավորումը, արտաքին լուսավորությունը.

*ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի* ,

### 2. Փողոցների, անցումների, հետիոտն ճանապարհների ու հեծանվաուղիների (ճանապարհային ցանց), հրապարակների, ներքին բակերի, շքաբակերի (կուրդոնյերների) և հարթակների կառուցվածքին ու ձևավորմանը, ավտոկայանատեղիների կազմակերպմանը ներկայացվող պահանջները

ա. ճանապարհային ծածկույթը (նյութը, դեկորատիվ տարրերը և գունային լուծումները),
*ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի և կազմավորված քաղաքաշինական միջավայրի պայմանների,*

բ. համայնքն սպասարկող տրանսպորտի համար նախատեսված կանգառների ձևավորումը,
*ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի և կազմավորված քաղաքաշինական միջավայրի պայմանների,*

գ. հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի տեղաշարժման համար անհրաժեշտ կահավորանքը (թեքահարթակներն ու հատուկ հարմարանքները՝ լուսային, ձայնային և այլ նախազգուշացման միջոցներով),
*ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի և կազմավորված քաղաքաշինական միջավայրի պայմանների,*

դ. ֆունկցիոնալ ձևավորումը, կանաչապատումը և կահավորանքը (փոքր ճարտարապետական ձևեր կամ դեկորատիվ արվեստի նմուշներ, զրուցարաններ, շվաքարաններ, նստարաններ,

շատրվաններ, դեկորատիվ ջրավազաններ, կանաչ տնկարկներ, այդ թվում՝ ուղղահայաց կանաչապատում և այլն),

*ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի և կազմավորված քաղաքաշինական միջավայրի պայմանների,*

ե. ճանապարհային ցանցին հարող պարիսպների, ցանկապատերի (այդ թվում՝ դալար ցանկապատերի) կառուցվածքին, նյութին ու ձևավորմանը ներկայացվող պահանջները.

*ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի և կազմավորված քաղաքաշինական միջավայրի պայմանների,*

**3. Լանդշաֆտին, այգեպուրակային շինարարությանը և կանաչապատմանը ներկայացվող պահանջները**

ա. ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների և հետիոտն շարժման ակտիվ գոտիների կանաչապատումն ու բարեկարգումը (փոքր ճարտարապետական ձևեր, ջրային մակերեսներ, շատրվաններ, նստարաններ, տաղավարներ, զբոսարաններ և բարեկարգման այլ տարրեր),

*ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի և կազմավորված քաղաքաշինական միջավայրի պայմանների,*

բ. այգեպուրակային շինարարության կազմը (հենապատեր, ծառուղիներ, հարթակներ, աստիճաններ, ինչպես նաև ծառեր, թփեր, սիզամարգեր, ծաղկաթմբեր և գալարվող բույսեր, դեկորատիվ բուսական ծածկույթ, բազմամյա և միամյա բույսերի տեսակներ, կանաչապատման և բարեկարգման այլ միջոցներ),

*ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի և կազմավորված քաղաքաշինական միջավայրի պայմանների,*

գ. անհրաժեշտության դեպքում՝ քամու դեմ պաշտպանական գոտու ստեղծման միջոցառումները (ծառատունկ, կանաչ ծածկույթների իրականացում տեղական ավանդական տնկանյութերի տեսակներից՝ տարբեր բարձրության բույսերի զուգակցմամբ),

*ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի և կազմավորված քաղաքաշինական միջավայրի պայմանների* :

**ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԺԱՐՈՒԺԻ ՂԱԶԱՐՅԱՆ**